ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մարտի 2015թ. N_-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 270-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ» N 270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետը՝

1) «օտարվում է ուղղակի վաճառքի ձևով» բառերից առաջ լրացնել «(բացառությամբ՝ հողամասերի)» բառերով.

2) լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) սոցիալական կամ բարեգործական կամ Երևան քաղաքի ավագանու հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու կամ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ հաստատված՝ այլ քաղաքների և այլ վարչատարածքային միավորների հետ համագործակցության մասին պայմանագրերից բխող Երևանի՝ Գույքի ուղղակի վաճառքի փոխադարձ օտարման պարտավորության կատարման ապահովման նպատակով՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ։ Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշմամբ և Գույքի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև Գույքի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 270-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը:

Նշված օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ քաղաքապետն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները. ավագանուն է ներկայացնում Երևանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը, դրան համապատասխան՝ տնօրինում է Երևանի սեփականություն համարվող գույքը:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 270-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին ընդունել ի գիտություն, որ հողամասերն օգտագործման, այդ թվում՝ սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) տրամադրելու և օտարման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման ՀՀ հողային, ՀՀ քաղաքացիական օրենսգրքերին, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմանը և հողային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 270-Ն որոշման հավելվածի 11-րդ կետով սահմանվել են Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքի ուղղակի վաճառքի դեպքերը, որոնք վերաբերվում են հողամաս չհանդիսացող այլ գույքին:

Հողամասի ուղղակի վաճառքի դեպքերը սահմանված են ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով:

Վերոհիշյալ իրավակարգավորմամբ պայմանավորված առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 23.12.2014թ. N 270-Ն որոշման հավելվածի 11-րդ կետը «օտարվում է ուղղակի վաճառքի ձևով» բառերից առաջ լրացնել «(բացառությամբ՝ հողամասերի)» բառերով:

Բացի այդ, Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշման հավելվածի 11-րդ կետն առաջարկվում է լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով, հաշվի առնելով հետևյալ հանգամանքները:

Կարևորելով սոցիալական կամ բարեգործական կամ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակը, պետությունը ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսել է պետության կամ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքի դեպք՝ ՀՀ կառավարության որոշմամբ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում այլ քաղաքների և այլ վարչատարածքային

միավորների հետ համագործակցության մասին պայմանագրերը հաստատելու վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանի և Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքի կառավարության միջև 07.07.2011թ. համաձայնեցված՝ առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական և հումանիտար համագործակցության ծրագրի 1-ին կետի 1.5-րդ ենթակետի համաձայն՝ նշված կողմերը ձեռք են բերել համաձայնություն գործող օրենսդրության համաձայն օժանդակել միմյանց՝ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում «Երևան», իսկ Երևան քաղաքում «Սանկտ-Պետերբուրգ» հյուրանոցների ստեղծմանը:

Երևանում «Սանկտ-Պետերբուրգ» հյուրանոցի շինարարության համար առաջարկվել է Աբովյան փողոցի առանցքով, դեպի հյուսիս Աբովյանի պուրակին հարող մոտ 0.83 հա հողատարածքը:

ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի «Գույք նվիրելու մասին» N 113-Ա որոշման 1-ին կետի համաձայն՝ Երևանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Երևան, Աբովյան պուրակ (ներքին ՕԿՋ) հասցեի շուրջ 1.7 հա հողամասում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 909.4 քառ. մետր մակերեսով ջրամբարը և 164.3 քառ. մետր օժանդակ շինությունները նվիրվել են Երևանի քաղաքային համայնքին:

ՀՀ կառավարության նշված որոշման 2-րդ կետով ընդունվել ի գիտություն Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝ ուղղակի վաճառքի ձևով նշված որոշման 1-ին կետում նշված գույքերի մի մասը և դրանց սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ շուրջ 0,83 հա հողամասը Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքի կառավարության կողմից նշված կազմակերպությանն օտարելու մասին:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրով պետք է նշվեն գույքի օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, ինչպես նաև կարևորելով Երևան քաղաքում սոցիալական կամ բարեգործական կամ ներդրումային ծրագրերի իրականացումը խրախուսելու, այլ քաղաքների և այլ վարչատարածքային միավորների հետ համագործակցության մասին պայմանագրերից բխող Երևանի՝ գույքի ուղղակի վաճառքի փոխադարձ օտարման պարտավորության կատարումն ապահովելու նպատակը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 270-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 270-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 270-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի N 270-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2015թ. բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ